

**Երևանի Մովսես Խորենացու անվան համալսարանի
ռեկտոր Ա.Ս.Աղաբաբյանի
2008 թ. տարեկան հաշվետվություն**

Հաշվետու ժամանակահատվածում Երևանի Մովսես Խորենացու անվան համալսարանի (այսուհետ կրճատ՝ ԵՄԽՀ) ղեկավարությունը, պրոֆեսորադասախոսական անձնակազմը ուսանողության հետ համատեղ որոշակի աշխատանքներ է ծավալել մանկավարժական, գիտակրթական, տնտեսական և ենթակառուցվածքների զարգացման ու բարելավման ուղղություններով:

Փորձենք ավելի հանգամանալից անդրադառնալ համալսարանի գործունեությանը ըստ վերոհիշյալ ոլորտների.

Կրթական գործունեություն

Շարունակվել են աշխատանքները ծրագրային բարեփոխումների, ուսումնական գործընթացի կազմակերպման ու պլանավորման կատարելագործման, ուսանողների գիտելիքների գնահատման գործընթացների բարելավման և մի շարք այլ ուղղություններով:

Կրեդիտային համակարգ

2008 թ. համալսարանում ներդրվել է կրեդիտային համակարգ: Այդ նպատակով իրականացվել են ճանաչողական և տեղեկատվական սեմինարներ և լսումներ, որոնց մասնակցել են ոչ միայն ուսանողները, այլև բուհ-ի դասախոսական կազմը: Ներկայումս աշխատանքներ են տարվում կրեդիտային համակարգի ընդլայնման ուղղությամբ:

Ուսումնական գործընթացի ընթացիկ կազմակերպում

Հաշվետու ուսումնական տարում ձեռնարկվել են ուսումնական գործընթացի բնականոն ընթացքի ապահովմանն ուղղված մի շարք միջոցառումներ: Իրականացվել է բակալավրիատի ու մագիստրատուրայի առկա և հեռակա ուսուցման առաջին կուրսի ուսանողների և ԵՄԽՀ-ի միջև ուսումնական գործընթացի կազմակերպման վերաբերյալ պայմանագրերի կնքման գործընթացը:

Հաշվետու ուս.տարվա ուսումնական գործընթացը կազմակերպելու համար հաշվառվել է լսարանային ֆոնդը, իրականացվել են աշխատանքներ այն արդյունավետ օգտագործելու և դասերի կանոնավոր կայացման ուղղությամբ:

Ձեռքերի կիրառման գործընթացն առավել հստակ և անթերի կազմակերպելու նպատակով ուսումնամեթոդական վարչությունը շարունակել է առաջադիմության վերահսկման աշխատանքները:

Ուսումնական պլանների մշտադիտարկում և վերանայում

2008 թ-ին բուհ-ում ներդրվել է կրեդիտային համակարգը և դրանից ելնելով էական և արմատական փոփոխությունների են ենթարկվել բուհ-ում գործող ուսումնական պլանները: Նախկին ուսումնական պլանները, որոնք հաստատվել էին 2002 թ-ին և գործել են մինչև 2008թ., համապատասխանում էին այդ ժամանակահատվածի պահանջվող չափանիշներին: Սակայն 2005թ-ից ՀՀ-ն, միանալով Բոլոնիայի գործընթացին, իր վրա պարտավորություն վերցրեց ինտեգրվելու եվրոպական միասնական կրթական դաշտին և ՀՀ կրթական համակարգը համապատասխանեցնելու ընդհանուր եվրոպական կրթական չափորոշիչներին:

Այդ պատճառով անցում կատարվեց կրեդիտային համակարգին, որն էլ իր հերթին բերեց կրթական գործընթացի իրականացման բազմաթիվ փոփոխությունների և մասնավորապես բուհ-ում ուսումնական պլանների փոփոխում և համապատասխանեցում կրեդիտային համակարգին:

Բուհում ստեղծվեց աշխատանքային խումբ, որն էլ ձեռնամուխ եղավ հիմնովին փոփոխել ուսումնական պլանները և դրանից բխող առարկայական ծրագրերը՝ հիմք ընդունելով հանրապետությունում գործող կրթական չափորոշիչները, ինչպես նաև ՀՀ բարձրագույն կրթության եռաստիճան համակարգի ներդրման մասին ՀՀ ԿԳ նախարարի 20.12.2006թ. N996 Ա/Գ հրամանը (Հաստատվել է <<ՀՀ բարձրագույն կրթության եռաստիճան համակարգի ներդրման ծրագիրը>> և <<ՀՀ բարձրագույն կրթության եռաստիճան համակարգի ներդրման ընթացիկ ծրագիրը>>), բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսումնական գործընթացի կրեդիտային համակարգի կազմակերպմանը օրինակելի կարգը հաստատված ՀՀ ԿԳ նախարարի 2007թ. հունիսի 19-ի N588 Ա/Ք հրամանով ուսումնական ծրագրերի /պլանների/ կրեդիտային հենքերի վերակառուցումը և կրթական մոդուլների կրեդիտների հատկացման մեթոդական ուղեցույցը:

Ուսումնական պլանների փոփոխությունը իր հերթին բերեց առարկայական ծրագրերի, դրանց ժամանակահատվածի բաշխման, ըստ կրթական մոդուլների և ըստ կիսամյակների համապատասխան բաժանումների, ինչպես նաև ծրագրերում ուսանողի ինքնուրույն և անհատական աշխատանքի ծավալների փոփոխություն: Պետք է նշել, որ այդ հսկայածավալ

աշխատանքը նույնպես իրականացվեց բուհում և այսօր մենք բոլոր մասնագիտություններով ունենք նոր և փոփոխված առարկայական ծրագրեր:

Ընդունելության նախապատրաստում

Հաշվետու տարում աշխատանք է տարվել պետական մասնագիտական ուսումնական հաստատությունների 2007/08 ուս.տարվա շրջանավարտների հետ, նրանց ներկայացվել են համալսարանական մասնագիտությունները, ծանոթացրել շարունակական կրթության և ընդհանուր հիմունքներով բակալավրի ծրագրով բուհ ընդունվելու կարգին:

Խիստ կարևորելով հանրակրթական դպրոցների բարձր դասարանների մասնագիտական կողմնորոշման ուղղությամբ տարվող աշխատանքները՝ ուսումնական վարչությունը հաշվետու տարվա ընթացքում մայրաքաղաքի և մարզերի մի շարք դպրոցների աշակերտների համար կազմակերպել է ճանաչողական այցեր և դասախոսություններ:

Վերոհիշյալ համալիր աշխատանքների շնորհիվ է նաև ապահովվել վերջին տարիների դիմորդների թվի անընդհատ աճը:

Ընդունելություն

Հաշվետու ուս.տարում բուհ են ընդունվել 257 ուսանող,

որից մագիստրատուրա – 5

բակալավր (առկա) – 221

բակալավր (հեռակա) – 31

Օտարերկրացիներ ընդունվել են ընդամենը -14

մագիստրատուրա – 0

բակալավր - 14

Հիմնական ուսանողական համակազմ և շրջանավարտներ

Հաշվետու ուս.տարում ուսանողների ընդհանուր թիվը - 907

որից մագիստրատուրա – 12

բակալավր (առկա) – 829

բակալավր (հեռակա) – 66

Սովորում են օտարերկրացիներ ընդամենը - 103

մագիստրատուրա – 0

բակալավր - 103

Ըստ մասնագիտությունների պատկերը հետևյալն է.

Մասնագիտութ.	Թույլ մասն.	Մասնակցել են	Միայն դրական գնահատական	Միայն գերազանց գնահատական	Գերազանցության դիպլոմ	Դիպլոմ չեն ստացել
Հայոց լեզու և գրակ.	35	34	34	7	5	-
Օտար լեզու և գրակ.	29	29	26	4	3	3
Ինֆ. և կիրառական մաթեմ.	7	7	7	2	2	-
Մանկ. և մեթոդիկա	49	49	47	6	4	2
Միջ. տնտես. հարաբեր.	36	36	36	5	3	-
Իրավագիտութ.	65	63	63	7	5	-
Ընդամենը	221	218	213	31	22	5

Դասախոսական կազմ

1. Դասախոսների ընդհանուր թիվը – 53
 - որից հիմնական – 31
2. Գիտ. դոկտոր կամ պրոֆեսոր - 3
 - որից հիմնական – 0
3. Գիտ. թեկնածու, դոցենտ - 26
 - որից հիմնական – 14
4. Դասախոս կամ ասիստենտ – 24
 - որից հիմնական – 17

Դասախոսների որակավորման բարձրացում և մասնագետների վերապատրաստում

ԵՄԽՀ դասախոսական կազմի մասնագիտական որակն ու գործունեությունն ապահովելու նպատակով կատարել և ապագայում պլանավորել է կատարելու մի շարք ընթացակարգեր:

Համալսարանի դասախոսների ուժերով հրատարակվել են.

1. Բաղադրյալ Մարիանա Ռոբերտի - Использование компьютера в методике преподавание английского языка- ՀՊՃՀ տարեկան գիտաժողով-2008թ.
English in practice /ուսումն.ձեռնարկ/ ՀՊՃՀ-2008թ.
2. Առաքելյան Վալերի - 1.Կազմակերպության տնտեսության գործունեության արդյունավետության գնահատում- /ուսումն.ձեռնարկ /-2008թ.
2.Նորամուծությունների կառավարում-/ուսումն.ձեռնարկ /-2008թ
3.Որակի կառավարում-/ուսումն.ձեռնարկ /-2008թ
4.Նորամուծությունները որպես արտադրության ստրատեգիական պլանավորման օբյեկտ--/ուսումն.ձեռնարկ /-2008թ
5.Կազմակերպության գործունեության ոլորտի ստրատեգիայի սահմանման մի քանի հարցեր--/ուսումն.ձեռնարկ /-2008թ
6. Ժամանակակից մարքեթինգ --/ուսումն.ձեռնարկ /-2008թ
- 3.Հարությունյան Արմեն- 1. Հ.Հիդյանի կյանքն ու գիտամանկավարժական գործունեությունը, Մ.Գոշ հանդես, Երևան 2008թ.
2. Գեղագիտական դաստիարակության դրվածքը Կ.Պոլսի նոր դրաքրոցի մանկավարժական գործընթացում, ժողովածու 53-րդ գիտ. նյութերի, Երևան-2008թ.
3. Գեղագիտական դաստիարակության դրվածքը Պերպերյան վարժարանի մանկավարժական գործընթացում - Երևան-2008թ
4. Մեռային զարգացման առանձնահատկությունները մանկավարժական գործընթացում, <<Մանկավարժ>> Երևան-2008թ.
5. Գենդերային զարգացման առանձնահատկությունները- Մ.Գոշ հանդես, Երևան 2008թ
6. Ժամանակակից աշխարհի կրթության զարգացման միտումները-

Գյումրի -2008թ.

4. Հակոբյան Մամիկոն - 1.Մթնոլորտային օզոնի ընդհանուր պարունակությունը, չափումը և հետազոտումը, ՀՊՃՀ, Երևան -2008թ.
2.Ոչ համառանցք մեկ օպտիկական տվիչներով միջառանցքային գիտական հարթակների կայունացման համակարգերի առանձնահատկությունը,ՀՊՃՀ, Երևան -2008թ
5. Թորոսյան Դավիթ - Плоская неоднородная задача для луночек с трещиной, проблемы динамики взаимодействия деформируемых сред-2008г.

Կատարվել են ստուգումներ

2008թ. դեկտեմբերին համալսարանում իրականացվել են ստուգումներ ՀՀ Կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից /համաձայնագիր N 1802760/:

Միջազգային համագործակցություն

2008թ. հոկտեմբերի 15-ից մինչև նոյեմբերի 6-ը ԵՄԽՀ-ի հրավերով ՀՀ-ում կանադական գրասենյակի միջնորդությամբ համալսարան է այցելել կանադացի փորձագետ Սանդա Աբրահամը, որի հետ իրականացվել է համալսարանի տարբեր ստորաբաժանումների կառուցվածքային և բովանդակային հարցերի քննարկում, համեմատվել է կանադական համալսարանների հետ կապված նմանատիպ կառուցվածքների գործունեությունը, փորձի փոխանակման տեսանկյունից եղել են բազմաթիվ փոխադարձ օգտակար առաջարկություններ:

Կանադացի մասնագետի այցը ԵՄԽՀ մեծ հոգեբանական առավելություն տվեց այն առումով, որ ավելի ամբողջական պատկերացում ունեցանք կանադայի բուհ-երի կառուցվածքային մեխանիզմներին և համոզվեցինք, որ կառուցվածքային տեսակետից մեր բուհերը առանձնապես չեն զիջում արտասահմանյան բուհերին: Հայաստանյան բուհերի և արտասահմանյան բուհերի էական տարբերությունը կայանում է նրանում, որ մեր բուհերում գնահատման համակարգերը և մեխանիզմները կայուն ձևով չեն արտացոլում ուսանողների ռեալ գիտելիքները (օրինակ մի բուհում նույն ուսանողը նույն գիտելիքներով կարող է ունենալ բարձր առաջադիմություն, մեկ այլ բուհում՝ ոչ): Արդյունքում Հայաստանյան բուհերի ամենաթույլ կողմ նշվեց այն փաստը, որ անհրաժեշտ է կայունացնել գնահատման մեխանիզմը:

Հանրային կապեր և տեղեկատվական համակարգեր

Բուհ-ը կամավոր դրամական օգնություն է ցուցաբերել <<ՕԳՆՄ>> հիմնադրամին, որի նպատակն է արյան հիվանդություններով տառապող երեխաների բուժմանը օժանդակելը:

ԵՄԽՀ հասարակայնության հետ կապերի ոլորտը հանդիսանում է բուհի գործունեության ու զարգացման կարևոր ոլորտներից մեկը:

Աշխատանքներ են տարվում հիմնականում հետևյալ ուղղություններով.

- համագործակցություն տպագիր և էլեկտրոնային լրատվամիջոցների հետ, միջոցառումների լուսաբանում;
- <<Մովսես Խորենացի>> գիտական հանդեսի հրատարակում;
- մեթոդական աշխատանքների իրականացում;
- համացանցային ռեսուրսների զարգացում և համացանցային տիրույթում ԵՄԽՀ-ի վերաբերյալ տեղեկատվության տարածում;
- ֆոտո- և տեսանյութերի ստեղծում և արխիվացում;
- պետական, տեղական ինքնակառավարման մարմինների, միջազգային կազմակերպությունների, հասարակական կազմակերպությունների, հիմնադրամների և տարբեր կառույցների հետ աշխատանքներ:

Հետևողական աշխատանք է կատարվել ԵՄԽՀ-ում հանրային նշանակության միջոցառումների պատշաճ լուսաբանման ուղղությամբ: ԶԼՄ-ի, հասարակական կազմակերպությունների և քաղաքացիների կողմից ԵՄԽՀ-ին հասցեագրված տեղեկատվություն ստանալու հարցումներին օրենքով սահմանված ժամկետներում տրվել են սպառիչ պատասխաններ:

Աշխատանքը ուսանողների և շրջանավարտների հետ

Հաշվետու ժամանակաշրջանում ԵՄԽՀ ուս. խորհուրդը շարունակել է իր գործունեությունը՝ պաշտպանելով ուսանողների շահերն ու իրավունքները, ապահովելով ուսանողների մասնակցությունը համալսարանի կառավարմանը, մասնակցելով ուսումնական գործընթացի և այլ աշխատանքների կազմակերպմանը և աջակցելով ուսանողության համար բարենպաստ կրթական միջավայրի ձևավորմանը:

ՈւՄ աշխատանքներում էական կարևորություն ունի ուսանողների գործող կրթական համակարգի, նրանց իրավունքների և պարտականությունների և ներհամալսարանական

կյանքի մասին իրազեկելու խնդիրը: Աշխատանքներ են իրականացվել ուսանողությանը կրեդիտային համակարգին ծանոթացնելու և այն ավելի ընկալելի դարձնելու ուղղությամբ: Կազմակերպվել են քննարկումներ, կլոր սեղաններ, սեմինարներ՝ ԵՄԽՀ ուսանողներին, հատկապես առաջին կուրսեցիներին իրենց իրավունքներին ու պարտականություններին ծանոթացնելու համար: